

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 117-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ **2021 թվականի N _____-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի N 117-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածերի պահանջներով՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի «Պետական պատվերով միջպետական և
միջգերատեսչական համաձայնագրերով օտարերկրյա պետությունների
բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին,
օրդինատուրայում, ինտերնատուրայում, մագիստրատուրայում կամ
ասպիրանտուրայում սովորողներին պարտադիր զինվորական
ծառայության զորակոչից ուսումը շարունակելու համար տարկետում
տալու դեպքերը և կարգը հաստատելու մասին» N 117-Ն որոշումը
լրացնել նոր 16-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «16. Սույնկարգի
համաձայն համապատասխան կրթական ծրագրով քաղաքացուն
տրված տարկետման ժամկետը կարող է երկարաձգվել Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշմամբ՝ համաճարակով կամ
այլ արտակարգ իրավիճակով (տարերային աղետների,
տեխնոլոգիական վթարների, համաճարակների, դժբախտ
պատահարների, հրդեհների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքեր)
պայմանավորված քաղաքացու ուսումնառության ավարտի ժամկետը

Երկարաձգելու վերաբերյալ համապատասխան ուսումնական
հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա, սակայն ոչ
ավելի, քան մինչև քաղաքացու 26 տարին լրանալու օրը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: